

Ը. ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԳՐՈՑ

ԿԱՐԳ ԵՒ ԴԱՍՄԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Այս նկատմամբ քիչ և համառոտ է մեր ընելիքը: Աստուածաշունչը գրոց մատենական դասակարգութիւնը՝ ընդհանրապէս ժամանակագրական — պատմական է, թէ՛ յերբայական և ՚ի քաղզէացի ընագրին և թէ՛ իւրայն թարգմանութեան Եօթանասնից: Մեր թարգմանութիւնն ալ այս վերջնայն վրայ եղած ըլլալով, այդ բնական կարգը պահուած է ՚ի նմա, առանց զննելու խտիր ընդ նախականն և ընդ երկրորդական կոչեցեալն, և այնպէս գրչագրաց ՚ի գրչագիրս փոխանցուելով հասած են առ մեզ: Անշուշտ և առ նախնիս մեր, որպէս առ այլ ազգս քրիստոնէական հնութեան, յուզուած են խնդիրք և տարակոյսք՝ նախականն և ոչ նոյնպիսի գրոց ընտրութեան և ընդունելութեան յեկեղեցւոյ: և ազգային եկեղեցական պատմութեանէ զհտենք, թէ ինչուան ազգային ժողովոյ մը մէջ ՚ի Պարտաւ՝ սահմանուած և վճռուած է անոնց թիւը: Այսպիսի խնդիրք՝ մեր գրուածքիս նպատակէն դուրս են, որ պատմասիրականն և եթ ունի տեսակէտ:

Հետաքննելին այն է՝ որ աստուածաշունչը տառից բովանդակութեան մէջ, ՚ի սյուցակս գրոց՝ յորոց օրինակ մը մէջ բերինք, կան այնպիսի մասունք, որոնքի սուրբ մատենին հետ երկրորդական վերաբերութիւն ունին: Այս գրութեանց ներքին և մատենագրական արժէք կը բռնադատեն զվեց համառօտիս, — երկասիրութեանս տանելուն չափ, — խօսիլ վրանին, ՚ի հմտութիւն ազգային և օտար բանասիրաց:

Նախ այն Նախադրութեանց վրայ, որ ՚ի զլուս ամէն մատենից աստուածաշունչ տառից հնոց կտակարանին կը գտնուին, ընտիր և իմաստուն յօրինուածով և շարագրութեան գեղեցիկ ոճով: Հետազօտելով նախ, թէ արդեօք սկզբնազիրք են առ մեզ, եթէ թարգմանութիւնք յօտար լեզուաց, Երկրորդ, ունին արդեօք զայն հնութիւն, ինչ որ սուրբ Գրոց թարգմանութեան կուտան ստուգահաւատ աւանդութիւնք և պատմութիւն:

Այս Նախադրութեանց ու անոնցմէ կտրը անմիջապէս դրուած ցանկերուն յունական սկզբնազիրք զեռ գտնուած չէ: Ոմանք Եւսեբևոյ կեսարացւոյ կ'ընծայեն զայնոսիկ. բայց անհաւանական կը թուի այս ենթադրութիւնս, որովհետև անոնցմէ մի քանիին մէջ կը յիշատակուի նա ինքն Եւսեբի, և ՚ի Քրոնիկոն գրոց նորա կամ ՚ի Ժամանակակնանացն վկայութիւնք մէջ կը բերուին: Այսպէս, օրինակ իմն, ՚ի Նախադրութեան գրոցն Եսթերայ, և Ժամանակ իրացն Եսթերայ... ոմանց առ Երկայնածիռն Արտաշէսի Թունցաւ իննէ. այլ ևս ոչ առնում յանձն՝ ասէ Եւսեբի », Կարձնալ ՚ի Նախադրութեան գրոցն Յուդթայ. « Ասէ Եւսեբի ՚ի Քրոնիկոնին՝ իրբև ՚ի սուլջութենէ զայս ինչ »: Ի Նախադրութեան առաջին Մակարայեցւոց. « Ի միջոցս յայս ՚ի Յովսէպայ և յԱլիբիկաննայ առեալ Եւսեբի զանուանս քահանայայտիցն՝ օր տիրէին ժողովրդեանն, նշանակէ ՚ի կանոնս ժամանակաց »: Արբոյն Աթանասի գրուածոց մէջ կը յիշատակուին աստուածաշունչը գրոց նախադրութիւնք կամ յառաջաբան տեղեկութիւնք յօրինեալք ՚ի նմանէ, սակայն չեն ՚ի կարգի հարստառ երկասիրութեանց սուրբ Հայրապետին, և չունին նմանութիւն առ մեզ գտնուածներուն հետ: Ուստի հաւանականաբար կըր-

նանք կարծել թէ 'ի մերոց յօրինուած ըլլան, և կամ նմանողութիամբ յոյն լեզուով շարագրուած նման գրուածի մը՝ որ կամ իսպառ անհետացած է, և կամ դեռ յայտնուած չէ: Յօրինման և շարագրութեան ոճն թուրք հաւատարմացընել թէ բուն ազգային ըլլան¹:

* *

Բայց ոչ նոյնպէս և նոր կտակարանի գրոց Նախագրութիւնք վասն զի 'ի զլուս շորից աւետարանագրաց դրուած նախագրութիւնք՝ թարգմանուած են 'ի յունականէ. և յումանց կ'ընծայուին արդէն մեր ընթերցողաց ծանօթ Պամիրելեայ վկայի, իսկ յայլոց կետարացոյն Եւսեբեայ. Համարարբուքն ալ՝ կամ Համեմատութիւնք շորից աւետարանաց ընդ միմեանս՝ Ամենի Աղեքսանդրացոյ, զորս յետոյ յընտրեալագոյն կարգ վերածեց նա ինքն Եւսեբի:

Առաքելական Պրակաց կամ Գործոց և իրենց անունը կրող թղթոց նախագրութիւնքն ալ Եւթաղի ընծայուած են, որուն ժամանակը ոչ յոյժ հեռի է 'ի թարգմանութիւնէ սուրբ Գրոց 'ի Հայ լեզու:

Խօսինք նախ Եւթաղի վրայ:

Իր անձին վրայ 'ի գրչագիրս մեր հետեւեալ տեղեկութեանց կը հանդիպինք. « Արկաղիտս և Անորիտս, որդիք Թէոդոսի մեծի, ամս քսան և չորս (թագաւորեցին): Ի սորա երկրորդ ամին եղև Եւթաղ երանելի Աղեքսանդրացի, որ հրաշագան յօրինուածովք զսուրբ զառաքելոցն և զկաթուղիկեայց զԵւթանեցունց թղթոցն զառաջարանն և զմասնաւորսն և զընթերցուածսն կարգեաց, սակս հերձուածոցն որ էին յայնմ՝ ժամանակի, կաշարութիւն և կարպոկրասեայ, կաթարոսի և Եկզարոսի, որք սոսկ մարդ ասէին զՔրիստոս. և զհին կտակարանսն ոչ ընդունէին, և զվկայութիւնսն որ վասն Քրիստոսի խոտէին »: Այսպէս յիշատակուած կը գտնենք 'ի կայսերաց կողեցեալ գիրս:

Ուրիշ տեղ մ'ալ. « Եւթաղ գրէ առ ճգնաւոր ոմն Աթանաս անուն, որ խնդրէր 'ի նմանէ պցանի առաքելոցն, ընդդէմ՝ եղմանողաց զսուրբ գիրս: Այլ այն է որ զցանկ Գործոցն խնդրեաց, այլ այլ ոմն թագաւորացն »: Ահա այլ յիշատակագիր. « Յաւորս Արկաղեայ և Անորեայ սուրբն Եւթաղի Աղեքսանդրացի արար զցանկ առաքելոյս 'ի խնդրոյ մեծի Հաւրն Թէոփիլոսի. նաև զԳործոցս և զկաթուղիկէից, 'ի խնդրոյ թագաւորացն կրանաւորին Աթանասի Համահասակի. յաղագս հերձուածոցն կղէտոսի և կարպոկրասեայ, որք զվկայութիւն մարգարէիցն որ վասն Քրիստոսի հանել եղմանէին 'ի նոր կտակարանաց »: Ուրիշ գրչագիր մ'ալ կ'ազգէ. « Այլ է այս՝ և այլ այն որ զԳործքն է խնդրել »: Յայտնի է 'ի վախճան սուրբ Գրոց իր անունը կրող Աղեբալ, որ ծանօթ է նաև արեւմտեայց. և հրատարակուած առ Մինեի (Dictionnaire Diplomatique) և 'ի գիրսն (Zaccagni, Vetera monumenta, Collectiv):

Քրիստոնէութեան առաջին գարեբու մէջ սուրբ Գրոց վրայ եղած մեկնաբանական երկասիրութեանց զլիսաւոր նպատակ եղած են Աւետարանք: Վասն զի հրէութեան, հեթանոսական կրօնից ու նոյն իսկ անդամնիկ քրիստոնէութեան մէջ երևցած հերձուածոց դէմ՝ հարկ էր զանոնք պաշտպանել,

¹ Մեզմէ շատ յառաջ քսած է Գեբ. Սոմալեան. Ristretto degli argomenti di ciascun libro e di ciascun capitolo della Bibbia. Opera maestrevolmente composta e tradotta nell'idioma armeno; quantunque non si conosca fino ad ora l'autore. (Quadro delle Opere anticamente tradotte in armeno).

ծանօթացրնել և պահպանել Տատիանոս, Ամիննիոս ու Եւսեբի՝ եղած են մեզի ծանօթ իմաստունն մեկնիչք, որ իրենց ջանից, որ իրենց գլխաւոր աւարկայ ըրին զաւտարանն աւտոր և սնոր պաշտպանութիւնն : Յետ Եւսեբիոյ՝ Համեմատարար քիչ աշխատանք մնացած էր կատարուելիք այդ սուրբ և նուիրական գրոց վրայ . առ առաւելն՝ մարթ էր կատարելագործել, աւելի պարզութիւն տալ իր՚կանոնական գրութեանն և ոչ ինչ այլ աւելի : Եւ այնպէս ալ եղաւ :

Աւետարաններէն ետքը՝ կարգը առաքելական Պրակաց և թղթոց կու գար : Նոր կտակարանաց այս մասին վրայ էական և գլխաւոր աշխատանքը՝ Հինգերորդ գարու մէջ, Եւթաղի կը պատկանի : Իր վարուց վրայ այսչափ միայն գիտենք որ սարկաւագ էր, ու յԵղիսպոսո՝ Հուանտականաբար յԱղեքսանդրիա ապրեցաւ . թէ եպիսկոպոսական աստիճանի ալ բուրձրացած ըլլայ, ինչպէս սմանք կարծեցին, պատմական ստուգութիւն չունի : Եւթաղի երկատիրութիւնը երկուքի էր բաժնուի . յորոց մին է այն զլիակարգութիւնք կամ բաժանմունք որ իր անուամբ Եւրաղեան կը կոչուին . և երկրորդն՝ տողից չափը կամ տողաչափութիւնն (stichometrie), ստիքիրոն կամ տունք յափպ արարեալ, ինչպէս կը թարգմանեն զայն նախնիք մեր : Առաջինն ուրիշ բան չէր, բայց իթէ ըստ աւետարանականացն՝ նմանօրինակ բաժանմանց վերածել նաև առաքելական Պրակցն ու թուղթերը, քիչ տարբերութեամբ անոնցմէ . և են նախ տիտղոսաց կամ ինչպէս ինքն Եւթաղ կը կոչէ՝ գլխոց դասաւորութիւնն կամ յօրինուածութիւնը, աւելի երկարօրէն յառաքելական Գործս և ՚ի թուղթը՝ քան զորս ենն յաւետարանս , և Սիլիքոն գլխոց անտարանին Մատթայի... կ'արձանագրուին ըստ ձեռագրաց : Եւթաղի զլիակարգութիւնը ոչ միայն անոնց նման Համառօտք չին՝ այլ մերթ մէկէն աւելի ստորաբաժանումն ալ ունին :

Ոմանց թուեցաւ թէ Եւթաղ օգուտ քաղած ըլլայ իրմէ յառաջընթաց եղող ուրիշ մը նման աշխատասիրութիւնէն . բայց իր լսօսքերը, որուն զուգընթաց կ'երևնան նաև իրաց հաւատախիք, ասոր հակառակ վկայութիւնը կու տան . « Զի ոչ ոք յայնցանէ, կ'ըսէ, որ աստուածեղէն բանին եղին պատգամաւորք մինչև ցայսօր գիտէի թէ վասն գրոցս այսոցիկ փոյթ յանձին կ'ալեալ եցոյց զկերպարանս աշխատութեան . քանզի ոչ ինչ այնպէս յանգուզն և ժպիրէ էի, եթէ զայոց ջան վաստակոց յիս առեալ անխնայ թշնամանէի տկարութեամբ՝ սակաւ գիտութեանս մերոյ զրնթեցուածոցն ընտրութիւնն » :

Եւթաղի երկատիրութեան երկրորդ մասն՝ աւելի կարևորն է և Հետաքընական, — ստիքիրոնը : Ընդհանրապէս քերթուածոց տող առ տող գրուելուն կը վերաբերի այս բառին նշանակութիւնը : Նախնիք մեր գոյն արմատն ՏԵՒՅՈՏ թարգմանած են կարգ, տող, ստանաւոր, ստիք, պարիսպ, սուն աղօրից, և այլն . իսկ ՏԵՒՅՈՒՐԵՍ-ՐՈՍ, ստանաւոր, ստիքիրոն, տուն յափպ : Եւթաղ մեծ նորս թիւն մը և մայծ ՚ի սուրբ Գիրս . բայց այս նորութիւնը հարկ չէ փնտռել զլիակարգութեանց և տիտղոսներու մէջ, այլ ստիքիրոնի գրութեան մէջ արժան է նկատել իր աշխատանքը, զոր և ինքն իսկ կ'ակնարկէ ՚ի յառաջարկն ի առաքելական Պրակաց, զոր յօրինած է ըստ սմանց ՚ի 46:10 և այլոց ՚ի 46:21 . « Ահա ստիկ իմ իսկ, կ'ըսէ, դառաքելական գիրս տունն առ տուն ընթերցեալ և գրեալ, կանխագոյն առաքելցի առ ոմն ըստ ՚ի Փրիստոսի Հարցն մերոց ,

1 Ուղղագոյն կ'երևնայ մեր ձեռագրաց մէջ յիշատակուած թուականն, « ՆԺ (410) Եւթաղի աղետանդրոցի յօրինեաց զցանկ Առաքելոցն և զԳործոց, » և որ աւելի կը յարձարի ժամանակի նպական թարգմանութեան սուրբ Գրոց :

սակա ինչ իմուլսանն տկարութեամբ ջոնացեայ, իբրև զաւանակ մի՛ անվարժ նորու սունն ընդ անապատ ընդ անկոխ ճանապարհ անցանել մտանել 'ի հրա-
հանգս հրամայեալս : Քիչ ետքն այ ուղղելով խօսքն առ Աթանասիոս իր
թղթակիցն, կը յաւելու. « Արդ որպիսի օրինակաւ պարա իցէ ընթերցուածա-
սէր լինել և աննիգ զնորին պարտն մեծարել, մանաւանդ միզ իսկ զօրհանա-
պագ, և 'ի մօտոյ ինձ իսկ գլխովին, որ զՊործոց առաքելոց գիրս, միանգամայն
և զԹղթոցն կաթողիկեայց մտաբերեցի ընթեռնուլ ըստ զլսոցն և ըստ տան-
ցրն, և եթէ որչափ պարտ իցէ ընտրել զգլուխս և գտուն, զատանել զմիտան
'ի միմեանց մանր մասամբբ, որպէս հրամայեցեր մեզ, եղբայր սիրելի
Աթանասիէ » :

* *

Ինչպէս ուրիշ ազգաց նոր կտակարանաց թարգմանութեանց մէջ, այսպէս
'ի մերումս կան Նախադրութիւնք չորից աւետարանաց, զոր արգէն յիշ-
ցնք, և կանոնք կամ զլուսկարգութիւնք՝ համեմատութեամբ չորիցն ընդ
միմեանս, և որ աւելի սովորական անուամբ Համաձայնութիւնք կամ Համա-
բարբարք (Διάθεσάρον) կը կոչուին : Հին քրիստոնէութեան պատմութենէ
և յաւանգութենէ գիտեմք թէ չորս աւետարանքն 'ի մի զուգելով և զէպքերն
իրարու համաձայնեցընելով, համաբարբառ վայտութեամբ աւետարանա-
գրաց՝ Քրիստոսի վարքը յօրինած էր Տատիանոս յերկրորդ դարու : Հատու-
ածք այս նշանաւոր երկասիրութեան գտնուեցան յատրական քրիստոնէայ
մատենագրութեան . և հմուտք՝ անոնց բաղդատութեամբն կարծեցին, և
ընդհանրապէս ընդունելի բրին հնագիտաց և հետամտից պատմութեան
կենդեցոյ, թէ Եփեսոսի Թորի ստրուոյ Համաբարբառի մկնութիւնը՝ որուն
ասորի սկզբնազիւր կորսուած և միայն հայկական թարգմանութեամբն
ծանօթուցած է բանասիրաց, Տատիանոսի երկասիրութեան վրայ և անոր
համեմատ եղած գրաւոր արտագրութիւն մ'է :

Այս կարծեաց զլիսաւոր պաշտպաններէն մէկն է հմուտ ասորագէտն՝ և
հայկական լեզուիս ոչ անտեղեակ աւտրիացի վարդապետն Աէսինկէր
(† 1881) : Եւսերեայ՝ որ ինչպէս յայտնի է, ժամանակաւ կրտսեր է քան
զՏատիանոս, երկասիրութիւնն այս չէ . այլ ցուցակ մը համեմատութեան՝
ամէն մէկ իջի վրայ, չորս աւետարանագրաց բովանդակութեանը, չորս
սրինակի մէջ ամփոփելով . զոր մասնաւոր նամակաւ մը կ'ուղղէ առ կար-
պիանոս ոմն՝ անշուշտ խնդրոզ բանին, Ընծայական թղթոյն սկզբնաւորու-
թիւնը հետեւեալն է .

« Եւսերի՛ կարպիանոսի սիրելի եղբոր 'ի Տէր ողջոյն, Ամուրի Աղեքսան-
դրացոյ բազմ՝ աշխատութեամբ և ճշգրտիւ փոյթ 'ի մէջ առեալ, զու՝ 'ի
չորից թճող միզ աւետարան Մատթեան աւետարանին զհամաբարբառս
այլոց աւետարանացն զգրուակս եղեալ առնթեբ միմեանց : Արպէս զի
'ի հարկէ զիպիւ կարգի շարի երիցն եւս ապա կանոնելոց որչափ ըստ
միպար ընթերցուածայն Արդ զի ողջանդամ և զայլոցն եւս զրնաւ մարմնոցն
և զարի ունիցիս գիտել զյանցնիւրսն ըստ իւրօրջանչի . ր աւետարանի 'ի տեղիս
յորս նորին աման, ասել ճշմարտասիրութեամբ 'ի յաշխատասիրութիւնէ յառա-
ջագոյն ստացելոյ տանն առեալ պատճառս՝ ըստ այլում զումարութեան կա-
նոնս տանն թուով, գրոշմեցի քեզ ներքնակարգեալս » :

1 Յոյն բնագիրն ունի . իբրև զհմուտ մի :

Այս է ահաւասիկ Ամոնի Աղերսանդրոցոյ Համարարաւ երկասիրութեան նկարագիրը, զոր կու տայ 'ի յիշեալ թղթին առ Կարպիանոս: Չրսեր թէ իրմէ տաճէ է զլխակարգութիւնս (κεφάλαια) զրութիւնն: այլ միայն թէ անոր Երկասիրութեան թերի մասունքն յորդորաւոր ըրին զինք՝ իր բրաւ ծէն տարրեր և լաւագոյն ախատասիրութեան մը ձեռք գարնել, որ առաւել շայեկան բլլայ ընթերցողոց, խոսափելով անոր պակասներէն: Աւստի վրիպեցաւ բազմահոգակ վարդապետն արեւմտեան եկեղեցոց Հերոնիմոս 'ի կարծեն թէ Եւսերեայ գրածը Հետեղութիւն է Ամոնի և ոչ այլ ինչ՝:

Շարունակելի

ԵՋՆԻԿ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍՍԻՐՈՒԹԻՒՆՆԸ
(Տես էջ 14)

ԵՋՆԻԿՍ մատենն՝ Եղծ աղանդոց կոչուած՝ 'ի չորս մասունս բաժանեալ է սովորաբար 'ի տագիրս և 'ի ձեռագրին. յորոց իւրաքանչիւր մասին մէջ ուրոյն կը խօսի նա կարգաւ ընդդէմ Հեթանոսաց, Պարսից, իմաստնոցն Յունաց և Մարկիոնի: Սակայն, եթէ ոք հետախոյզ աչք ընթեռնու զայն, պիտի տեսնէ ան, չուշտ՝ որ այն չորս մասանց կամ գրոց մէջ կայ ծածկուած ուրիշ մաս մի ևս կամ գիրք մի, որ գրեթէ խառնուեր է միւս ծանօթ մասանց հետ. և այս բանս հաստատեալու չամար ունեմք մի քանի պատճառներ և վկայութիւնք:

Եթէ. օրինակի ազգաւ, բանամք առաջին գիրքը և նետջնեալ յառաջ վարեմք ընթերցողներս, անգէն մեր մտաց առջև վսեմ տեսարան մի կը բացուի. կարծես թէ կը տեսնեմք տիեզերական վիճը կամ թոհորոհն այնքան խառն 'ի խուռնխաղանդոց և մուրուրեանց, որոց նահառակ յստակ և պայծառ կը յուանայ շքմարտութիւնն իբրև լոյս մի՝ 'ի գրէն մանաւանդ թէ և 'ի մտաց Եղնկայ և կը հերքէ զայն: Մի առ մի 'ի մէջ կը բերէ անդ նեթանոսաց աղանդքը, հիւզեայ, չարի և բարւոյ, մարգոյս և գիւսաց անձնիշխանութեան խնդիրքը ևն, որոց դէմ կը գնէ իւր զորուոր ապացուցութիւնքը: Սակայն մի և նոյն գրոց մէջ կը պատահիմք այնպիսի տեղերու, ուր մատենագիրն թուի թուողը զնեթանոսս և խօսիլ մերթ առ հաւատացեալս, և մերթ հերետիկոսաց կամ ներձուածողաց դէմ, որք յայտնի կ'երևի թէ կ'ընդունելին զՍ. Կիրոս և կը հաւատային Քրիստոսսի Մարգեղութեան: Աւստի բանս ոչ թէ միայն առաջին գրոց մէջ կամ մի քանի տեղ միայն կը տեսնեմք, այլ յաղորդաբար երեք առաջին գրոց մէջ ևս կը տեսնուի. անոնց բերանը կը գնէ առարկութիւններ, երբեմն ևս նորք խնդիրներ. զորս մի առ մի կը պարզէ և կը հերքէ:

Արդ. եթէ բովանդակ գրոց վրայ հետախոյզ ակնարկ մը ձգենք, պիտի տեսնենք որ Ա. Այնպիսի խնդիրներ կը յուզէ, որում Հեթանոսք կամ Պարսիկք կամ Յունաց իմաստունքն այնքան կարեւորութիւն չ'էին տար, և որք ուղղակի նոցա

1 Canones quos Eusebius Cæsarensis episcopus, Alexandrinum secutus Ammonium, in decem numeros ordinavit, sicut in græco habentur, expressimus. Ուրիշ տեղ մ'ալ. Ammonius evangelii Canones excogitavit, quos postea secutus est Eusebius Cæsarensis.